Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ptrucs

Ulry unkep

99
51

Էջմիածնի գրքի թանգարան
F 100
891.99
Շ-57
-6 NOV 2011

ՉԵՐԱՄ

ՍԻՐՈՅ ԶՈՀԵՐ

ՊՈԷՄԱ

Ամբանոցային կեանքից

№ 2.

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A. Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

ԲԱԳՈՒ
Տպարան Եղբ. Ղազարեանների
1904.

ՄԱՏԵՆԱՐԱՆ-2013

47581

Дозволено Цензурою,
19-го Іюля 1904 года, г. Тифлисъ.

ՆՈՒԷՐ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ՝

Հեղինակից։

ՍԻՐՈՅ ԶՈՀԵՐ

I.

Բարձր լեռներից հովուկ գիշերը
Նազենազ իջաւ աշխարհի վերան.
Կանաչ հովտի մէջ լռեցին ձայները
Եւ ճրագները գիւղի մէջ շիջան։
Ամեն բան խորին լռութեան մէջ էր.
Ո՛չ հողմ, ո՛չ գետիւռ և ո՛չ սոսափիւն,
Մ՚միայն հեռուից ազատ լսւում էր
Փոքրիկ գետակի ախորժ կարկաչիւն։
Երկչոտ քայլերով մի մռայլ ստուերը
Գիւղից դուրս գալով՝ մտաւ անտառը,
Ուր խաղաղութիւնը պարզած իւր թեւեր՝
Անշարժ պահում էր ամեն մի ծառը։
Դարիվայր շաւղով նա ընթանում էր
Դէպի գետակը, որ շատ հեռու չէր.
Երբեմն նստում էր՝ հանգստանում էր
Եւ մերթ իւր ուղին շարունակում էր։

Նա դողդոջ քայլով հասաւ գետակը,
Նստեց հնօրեայ մի ուռենու տակ,
Ուր որսի յուսով երբեմն կարապը
Ողջ օրը կանգնած՝ նայում էր անյագ։
Բայց ահա լեռան յետևից նազով,
Ինչպէս թագուհի, դուրս եկաւ լուսին
Եւ լուսաւորեց արծաթեայ շողով
Գունաթափ դէմքը նազելի կուսին.
Շագանակագոյն երկայն հիւսերը
Մինչև կիսաբաց կուրծքը վայր իջած՝
Պահպանում էին նորա ուսերը,
Ինչպէս մի գաղտնիք աշխարհից պահած։
Գոյն գոյն թելերով ասեղնագործած
Հալաւի տակից հասունակ կուրծքը,
Ինչպէս զոյգ նռներ, ազատ բարձրացած
Յափշտակում էին նայողի ուշքը։
Կեռ-կեռ յօնքերը սպիտակ ճակատին
Տալիս էին մի շքեղ վեհութիւն,
Ինչպէս ձիւնապատ սարի գագաթին
Յանդիման նըստած երկու սև թռչուն։
Կիսաբաց վարդը այլալած դէմքին
Պալարի նման այրւում էր, վառւում,
Որ ոչ այլ ինչ էր—այլ նորա ներքին,
Հոգեկան յուզմանց արտայայտութիւն։

II.

Տխուր, լուսահատ և լուռ նստած էր՝
Խոր մոռացութեան մէջ խորասուզուած.
Մի փոքրիկ մանուկ կողքին ընկած էր՝
Բրդէ հաստ շալում ամուր փաթաթած։
Նա արտասուելով՝ առաւ մանկանը
Եւ իւր աչքերը յառեց երկնքին.
Դառն մտքերի սև կարաւանը
Պաշարեց նրա խըռոված հոգին։
Նորա մէջ զարթնեց անցած, գնացած
Ոսկի օրերի քաղցրիկ յիշատակ, —
Տըգիտութեան մէջ անօգուտ վատնած՝
Կեանքի խընկահոտ գարնան եղանակ։
Նորա մէջ զարթնեց կորուստի մատնած
Սիրոյ ժամերի կախարդիչ պատկեր,
Երբ «Երկու Հոգի» ձեռք ձեռքի տուած՝
Պըտըտում էին ձորեր ու դաշտեր.
Երբ այս անտառում, լուսնեակ գիշերով,
Տուած կուրծք կրծքի, շրթունք շրթունքի՝
Լուռ ծծում էին սիրատենչ սրտով
Անուշիկ հիւթը սիրոյ ծաղկունքի։
Նորա ականջում նորոգւեց կրկին
Ծանօթ խօսքերի ախորժ հնչիւնը.
«Ես քեզ սիրում եմ... Մեր սուրբ պսակին
«Պիտի ողջունէ եկող գարունը...»

—Բայց նա ինձ խաբեց... Նորա խօսքերը
Կեղծ վարդի փունջ էր... Նորա «սուրբ սէրը»—
Կատաղի արեան հիւանդութիւն էր...
Նորա համբոյրը—մահացու թոյն էր։—
Ասաց և լռեց. բայց արտասուքի
Կաթիլներն ընկան այտերի վրան
Եւ արծաթափայլ շողով լուսնեակի
Փայլեցին անգին գոհարի նման։

III.

Գուցէ շատ երկար այդ թշուառ կինը
Կըտատանուէր դեռ մտքերի հողմից,
Թէ փոքրիկ մանկան անուշիկ ճիչը
Չ'հանէր նորան այդ դրութիւնից։
Նա վերջին անգամ դողդոջուն ձեռքով
Շքեղ հալաւի կոճակը բացեց
Եւ մատաղ ծիծը խոր յուզուած սրտով
Նորածին մանկան բերանը գցեց։
Նա վերջին անգամ դողդոջուն ձեռքով
Մայրական կրծքին սեղմեց զաւակին
Եւ մի խուլ հառաչ սրտից հանելով՝
Լուռ հեկեկանքով խօսեց վշտագին.
«Թշուառագոյն մօր դու զաւակ թշուառ
«Եւ խաբեբայ հօր կեղծ սիրոյ պտուղ.
«Դեռ նոր ոաք դրած դէպի լոյս աշխարհ—

«Եւ ահ՝ առաջիդ մահու մառախուղ...
«Կեր... Ո՛հ, ես մայր չեմ, այլ թունալից իժ.
«Ծծիր այդ թոյնը մայրական կրծքից...
«Ո՛չ, ես ծնող չեմ, այլ մի չար պատիժ,
«Մի հրէշ, մի դև՝ ելած դժոխքից...
«Բայց դու նայում ես ուրախ և անհոգ,
«Եւ չես նկատում այն արհաւիրքը,
«Այն անսպասելի մահը անողոք,
«Որ քեզ կանչում է դէպի իւր գերկը...
«Գնաս բարեաւ, իմ վատաբախտ զաւակ.
«Ներիր յանցանքը քո քարասիրտ մօր.
«Թող այս փրփրագէզ, խոխոջուն գետակ
«Քեզ մայր և տապան լինի դարևոր։
«Դու այդ կլկլան գոհակների մէջ
«Հանգիստ կըգտնես յաւիտենական.
«Բայց ես, վա՛յ գլխիս, կըտանջուեմ անվերջ՝
«Առանց տեսնելու մի ուրախ վայրկեան։
«Ես մեղաւոր չեմ, գիտէ երկինքը,
«Այլ քո քարասիրտ հօր խարդաւանքը,
«Իմ ծնողների լուռ նախատինքը,
«Կուսական ամօթն ու պատկառանքը։
«Հայրդ ինձ խաբեց. հիմայ դու քաւիր
«Նորա յանցանքը, փրկիր, ազատիր
«Նորա խեղճ հոգին... (Անգուլթ Վալենտին,
«Ահա արդիւնքը քո գործած մեղքին...)», —
Ասաց. բայց յանկարծ վեր թռաւ տեղից՝

Սիրոյ պտուղը պինդ բռնած ձեռքին,
Եւ վերջին անգամ իրա վշտալից
Հայացքը գրցած նորա աչքերին՝
Խօսեց. «Կատարեալ նորա աչքերը,
«Նորա ոսկէփայլ գանգուր մազերը.
«Կատարեալ հօրը դէմքի գծերը,
«Ինչպէս մէջ տեղից կիսած խնձորը...
«Բայց նա հեռացաւ. թող անհետանայ
«Եւ իւր կեղծ սիրոյ մանուկ մեխակը.
«Թող ոչինչ բանով իմ մէջ չ'արթնանայ
«Նորա պատկերը և յիշատակը...»
Խօսքը վերջացաւ. լռեց շշուկը.
Աղջիկը ձեռքից մի ինչ որ նետեց —
Եւ անօգնական տկլոր մանուկը
Ձչալով՝ ընկաւ ալիքների մէջ...
Երկար նա կանգնած գետի եզերքին՝
Ապշած նայում էր խեղդւող մանուկին
Մինչ գոհակները հեռու մըղեցին
Նորան և իւր մօր աչքից խլեցին։

IV.

Գիշերուայ կէսն էր։ Համեստ լուսնեակը
Լուսաւորում էր դեռ շրջագայքը...
Անուշ փչում էր հովտի զեփիւռը.
Մեղմ խոխոջում էր և գետի ջուրը։

Թաւ անտառի մէջ մեծ-մեծ քայլերով
Նա խելագարի նման գնում էր
Եւ, ինչպէս տերև հողմից տատանուող,
Ամբողջ մարմնովը դրդ-դրդ դողում էր։
Նորա երկիւղած աչքերի առաջ
Ամեն մի ծառը կենդանացել էր,
Եւ այն փրփրադէզ և գեղակարկաչ
Գետը — մի հսկայ վիշապ դարձել էր։
Ցաւերից ճնշուած ալէկոծ սիրտը
Փշրել էր ուզում իր կապանքները.
Անձրևի նման թափւում էր քիրտը՝
Թրջում պատռտուած վերնաշորերը։
Եւ իշխանական պղծած արիւնը
Երակների մէջ ալեկոծում էր.
Վրդովուած սրտի սուր բաբախիւնը՝
Կռանի նման՝ կուրծքը ծեծում էր։
Պատանից հանած մեռելի նման
Դէմքը գունատուել և այլայլուել էր
Իսկ աչքերի մէջ խելագարութեան
Արիւնը արդէն փայլատակում էր։
Նա չէր հարցնում ոչ փուշ և ոչ քար,
Ո՛չ թուփ, ոչ ծառեր և ոչ ճանապարհ,
Այլ կատաղաբար ոտքը գնումէր, —
Ինքն էլ չգիտէր, թէ ո՞ւր գնում էր։
Սուր սուր քարերից, փշաթփերից
Կեղեքուել էին ձեռք, երես ոտներ.

Կարմիր արիւնը նորա չորս կողմից
Մեծ կաթիլներով ծորում, հոսում էր։
Զրահեղծ մանկան ուրուականի —
Ստուերը նրան միշտ հետևում էր.
Նորա սրտակէզ լացն ու կականը
Միայն ականջին անվերջ հնչում էր։
Նա մերթ նստում էր և ահաբեկուած՝
Նայում իւր շուրջը, անշունչ ծառերին,
Մերթ վեր էր թռչում և հևքը կտրած՝
Ականջ էր դնում զողանջող հողմին։
Բայց նա հողմի մէջ լսում էր միայն
Խեղդուող զաւակի սրտախորով ձայն՝,
Եւ խիտ ծառերի մեղմ սոսափիւնը
Նորան կրկնում էր հենց նոյն հնչիւնը։
Նա սարսափահար դէմքը շրջում էր.
Բայց նորա աչքին կենդանանում էր՝
Ուռենի ծառը, վազող գետակը
Եւ նրա միջին խեղդուող զաւակը. —
Նա խղճահարուած ձեռքը մեկնում էր,
Որ թշուառ զոհին մահից ազատէր, —
Իսկոյն ամենայն բան չքանում էր՝
Ինչպէս կարճ երազ, ինչպէս մի ստուեր։
Երբեմն էլ յանկարծ նա շտապ վազում էր
Դէպի իւր աչքին երևող գետը, —
Բայց ընկնում էր կամ թփերի վրայ,
Կամ սուր քարերի, կամ խորխորատը,

Ուր որ գնում էր, որ կողմն անցնում էր՝
Նա նոյն պատկերը միշտ տեսանում էր.
Նոյն ալիքները, ահագին ժայռը,
Զրի փրփուրը, ուռենի ծառը։
Թէ բու էր վուլում, կամ քամի հնչում.
Կամ տերև շարժուում՝ ծառը խշխշում,
Թէ թփի տակից նապաստակ փախչում՝
Նա միշտ նոյն ձայնը, նոյն ճիչն էր լսում...
Բայց ահա յանկարծ վայրենի ձայնով
Կանչեց. «Գալիս եմ, որդեակ, սիրարկան...
«Ահա և հայրդ... Գալիս ենք շուտով...» —
Եւ անյայտացաւ շուաքի նման։

V.

Քնի աստուածը թևերը պարզած՝
Պահնակի նման երկրին հսկում էր,
Անտառը աչքը լուսնեակին յառած՝
Խուլ մշմշալով անուշ նիրհում էր։
Վիլիխարի ժայռը գլուխը ծռած՝
Զրերի վրայ հանգստանում էր.
Նորա գեղեցիկ հովանին ընկած՝
Ալիքների հետ հանդարտ խաղում էր։
Ամեն բան քնած, ամեն բան լուռ էր,
Միայն գետակը — ջուրը արթուն էր.
Նա անվերջ ձայնով լուռ մրմնջում էր, —

Կասես մի ինչ որ մարդու կանչում էր։
Ծանօթ ուռենու հովանու տակին
Երևում էր մի կանայի ստուեր,
Որ աչքը յառած վազող գետակին՝
Գոհակների մէջ մի բան փնտրում էր։
Ամպի շերտերը լուսնի երեսին
Նկարել էին մի խորին թախիծ.
Աստղերը կարծես խմբուած միասին՝
Երգ էին երգում, մի երգ վշտալից։
Երկնքից մի վառ աստղիկ վայր ընկաւ՝
Հետքից չընթողելով ոչ գիծ, ոչ նշան.
Լուսինն էլ լեռան քամակը իջաւ —
Եւ սև խաւարով ծածկեց ամեն բան...

VI.

Անցել էր հինգ օր։ Դեռ առաւօտ էր։
Հովտից բարձրացած մի սև մառախուղ՝
Նայողի աչքից վարագուրում էր
Մօտիկ անտառը և մեզ ծանօթ գիւղ։
Գիւղից ոչ հեռու՝ ջրաղացի մօտ,
Գետի աւազօտ եզերքի վրայ,
Ամբոխը դիզուած զերթ ոչխարի հօտ՝
Մի թշուառ դէպքի կանգնած էր վկայ։
Ամարանոցի այցելուները
Խորին թախծութեան մէջ խորասուզուած

Քչփչում էին՝ իւրեանց աչքերը
Հետաքրքրութեամբ գետափին դարձրած։
Երկու դիակներ — ջրից նոր հանած —
Մէջ տեղ ընկած էր. մէկը նորածին
Մի փոքրիկ մանկան, միւսը մի հասած,
Մի երիտասարդ աղջիկ էր թէ կին...
Յետ բժշկական հետազօտութեան
Յայտնուեցաւ, որ մայր և որդի էին
Ջրահեղձները։ Բոլոր բազմութեան
Ծանօթ էր դէմքը վատաբախտ զոհին։
Ամարանոցի դա միակ զարդն էր,
Գեղեցիկ սեռի թագն ու պսակը.
Նա գեղեցկութեան աննման վարդն էր,
Եւ խնջոյքների գեղ թիթեռնակը։
Դա Բոզան էր, չքնաղ Բոզան,
Գ.....օվի միջնակ աղջիկը,
Երկու հեզ հոգու սուրբ ամուսնութեան
Ամենաշքեղ սիրոյ ծաղիկը։
Նրա վատաբախտ ծեր ծնողները
Աչքերը յառած իւրեանց զաւակին՝
Լուռ թափում էին արտասուքները
Եւ անմխիթար նայում ամբոխին։
Բայց ամենայն բան ահա վերջացաւ.
Մօրը և որդուն դրին դագաղում.
Հոգևոր երգի ձայնը բարձրացաւ՝
Ամբոխը շարժուեց դէպ՝ գերեզմանատուն։

Ամենն էլ ողբում և արտասուում էր,
Ամենն էլ նորան լուռ հետևում էր.
Մի կաթ արտասուք թէ մարդ և թէ կին
Գցում էր նորա սուրբ յիշատակին.
Միմիայն մէկ մարդ — ոչ արցունք, ոչ լաց -
Անզգայ մնաց նորա վիճակին.
Նա հանգիստ սրտով ծառի տակ կանգնած՝
Անգամ չէր նայում հանած դիակին։
Միմիայն մէկ մարդ, մի երիտասարդ
Թշուառ Ռոզալին գէթ հետևում չէր,
Այլ իրա համար սուլելով հանդարտ
Խոյս տուաւ դէպ՝ տուն — դա Վալենտինն
էր...

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI 1922

«Ազգային գրադարան»
NL0358709

47581